

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԻ 874 Թ.
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Երևանի անցյալին նվիրված սլատական տեսությունները սովորաբար սկսվում են այն փաստի հիշատակությամբ, որ խալդական շրջանում այն կոչվելիս է եղել Էրիաինի (Eriaini)¹: Ապա նշվում է «Գիրք թղթոց»-ի մեջ հիշատակած՝ Աբրահամ հայոց կաթողիկոսի գումարած հակաքաղկեդոնիկ եկեղեցական ժողովի (մինչ 602 թ.) մասնակից երկու «վանաց երեցների» անունները, մեկը «Դաւիթ Երևանայ», իսկ մյուսը «Ջոջիկ Երևանից», որով ապացուցվում է Երևանի գոյությունը VI դարի վերջերին: Երևանի ու նրա բերդի անունը տալիս է VII դարում և Սեբեոս պատմիչը, սակայն գնելով «ի կողմանս Սեպհական գնդին», որ դժվարացնում է նրա նույնացումը Այրարատյան դավառի Երևանի հետ¹:

Եթե բերդապատ Երևանի գոյությունը VII դարում կասկածելի է թվում, հապա այգեպատ Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ ամեն կասկածից դուրս է:

Այս արձանագրությունը, որ մենք հայաբերեցինք դեռևս 1924 թվին, Սևանի Առաքելոց եկեղեցու (լեռան փոքր դմբեթավոր տաճարի) գմբեթի վրա և հրատարակեցինք 1939 թվին², որոշ չափով շփվում է, մի կողմից՝ Սահփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական»-ի այն տվյալներին, որ վերաբերում են Սևանա կղզու շինարարությանը, իսկ մյուս կողմից՝ Սիմեոն Երևանցու «Ջամբո»-ի հաղորդած այն ցուցակին, որ վերաբերում է Սևանա վանքին պատկանելիք անշարժ գույքին:

Ահա այդ արձանագրությունն ըստ մեր ընթերցման (5 տող).

1. Դամանն այ Սիւնեաց | տիկին (բնագրում՝ տքն) Մարիամ շինեցի զեկեղեցիս | յանուն սբ | առաքելոցն՝ միաբանութեամբ (բնագրում՝ միայրանութբ) ||
2. Աշոտ[ոյ] (բնագրում՝ Ոշոտ) եւ տվաք | վախմ սբ առաքելոցն զՎարսերն, | զԴոմաձոր, Յամաքբերդ, Իւերդք, Ուտե || -
3. ացտափ, որսն զկա|ակծնկին, այդի ի Գա|ւնի եւ | յԵրեւան. և թանկագին նշան ||

¹ Դրականություն՝ Երվանդ Շահադիդ, Հին Երևանը, 1931, էջ 7—14. Է. Ն. Ակիսյան, Հին Երևանը, — «Հանդէս ամսօրեայ», 1934 թ., № 5—7, էջ 327. հմմ. Հ. Բ. Քոչար, Երևան, — «Սովետական Հայաստան» 1940 թ. № 219: Սկզբնաղբյուրներ՝ Գիրք թղթոց, թ. 1901, էջ 151. Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն. չորրորդ ապագրութիւն բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանիւ և ծանօթութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան 1939, էջ 118:

² Л. Меликсет-Беков, Новооткрытая надпись на Севане от 874 г., — «Памяти академика Н. Я. Марра (1864—1934)», изд. Акад. наук СССР, М. Л. 1938, стр. 409—415 и табл. I там-же (խմբագրության անփութությամբ, գժբախաբար, արձանագրության լուսանկարը ապված է գլխիվայր, իսկ տեքստը՝ սրբագրական սխալներով):

4. ք անընկալ սբ նշանաց | տամ ի ժառանգութիւն զկ | տակելոյ (sic) | զկորատեղ, ով խա || -

5. փանէ՛ ՅԺԸ[ից] նզովեալ ե | զիցի. թվ ՅԻԳ: ||
Նուէնը ըստ Ստ. Օրբելյանի.

«Մեծն թագուհին Մարիամ ամուսին Վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա՝ ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ առաքելոց և զմիւսն յանուն տիրուհւոյ աստուածածնին. և զարգարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն աստուծոյ և բնակարան աստուածազգեսց արանց յՅԻԳ թուականին Հայոց: Ի այց Մաշտոց եզ սահման վանացն և պայծառացոյց երկնաքատակ կարգօք. յորմէ համբաւոյ միարանեալ Աշոտոյ՝ իշխանաց իշխանի սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ հօրն և ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին, և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն զիւզս՝ զՎարսերն, զՅամաքարերզ, զԴոմաձորն, զԲերգքն, զՈւռեացտափ և գորսն Կոակծին, և այգիս ի Գառնի և յԵրեան ե յայլ տեղիս, և բազում նզովիւք հաստատեցին»²:

Վերահիշյալ՝ 874 թ. արձանագրության և Ստ. Օրբելյանի ցուցմունքի հանգեպ Արմենոն Երեանցին Սեանի անշարժ գույքի ցանկը XVIII գարու նկատմամբ տալիս է հետևյալ կերպով.

«Աւանա անապատի որպիսութիւնի»

«Անապատս այս, որ է ծովակն Դեգարքունւոյ, որ և... նախապէս հիմնարկեցաւ ի թուոջ...»

«Ունի զվիճակս ի Դեօղարքունի, զԿախմախի, զԲատակալ, զՎարգել, ևս զՎարգել, զՓշմակալ, զԲուղտաթափայ, զՂարադալու, զՊորտակ, զԿորատեղ: Իսկ ի Ծագկունեաց նահանգէն զայս ինչ ունի. զԴրախտիկ, զՈւռիծառ, զՄեծտափ, զԶիպուխու, զՅամաքարերզ, զԴոմաձոր, զՎարսեր, զՇալիս, զԿորբել և զԾագկունք»²:

Այս ցանկում մի շարք անուններ՝ Կորատեղ, Ուռիծառ, Մեծ տափ, Յամաքարերզ, Գոմաձոր և Վարսերը՝ կրկնություն են 874 թ. արձանագրության և Ստ. Օրբելյանի հիշատակածի. մինչդեռ Գառնիի և Երեանու այգիներն մասին այլևս խոսք չկա: Հավանական է, որ Աւանա վանքի իրավունքները IX գարում նվիրված տեղերի նկատմամբ կարող էին խախտվել, ինչպես օրինակ՝ Գառնիի և Երեանի այգիների վերաբերմամբ: Սակայն փաստը մնում է փաստ, որ Երեանն իր այգիներով հիշատակված է ինչպես 874 թ. արձանագրության մեջ, նույնպես և Ստ. Օրբելյանի Պատմության մեջ:

¹ Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա 1861, էջ 116—127.— Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց {«Ղուկասեան Մատենադարան» 4}, Տփղիս, 1911, էջ 173—174:

² «Ջամբո», 1873, եջ 284: